

2677



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«01» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 075 - 25

Նախաձեռնող՝

«ՎարդանյանՇին» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց փ. 7 շենք/56

Գործունեությունը՝

Նոր Գյուղ բնակավայրի 275-րդ թաղամաս
17 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ
բնակելի շենքի կառուցում
Կտրայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 075 - 25

«01» սեպտեմբեր 2025թ.

Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի 275-րդ թաղամաս 17 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՎարդանյանՇին» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Նոր Գյուղ բնակավայր

Ներածական մաս. «ՎարդանյանՇին» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Նոր Գյուղ բնակավայրի 275-րդ թաղամաս 17 հողամաս հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի շենք:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ընդհանուր օգտագործման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, ընդհանուր բաժնային սեփականություն:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից 39 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1430 մ: Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ մինչև 30 մետր խորությամբ փորված հորատանցքերով՝ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Ֆիզիկակերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փուղումը և այլն, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում



չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի տարածքն ազատ է կառուցապատումից: Հարևանությամբ առկա են այլ բնակելի, հասարակական շենք-շինություններ, որոնք նախատեսվող գործունեության տարածքից գտնվում են 34 մ և ավել հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի 275-թաղամաս 17 հողամաս հասցեում: Նախատեսվող շենքի առանցքային չափերը կլինեն՝ 54.60x19.50 մ, հարկայնությունը՝ 2 ստորգետնյա և 15 վերգետնյա հարկ: Առավելագույն բարձրությունը նախատեսված է 53.85 մետր: Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսված է 117 մեքենայի համար ավտոկայանատեղի: Մուտքը դեպի ստորգետնյա ավտոկայանատեղիներ նախատեսված է ներբակային փողոցի կողմից՝ բաց թեքամուտքով: Նկուղային հարկում կլինեն սանհանգույցներ, վթարային անխափան լուսավորություն: Նկուղային հարկերի համար նախատեսված են օդափոխության, ծխահեռացման համակարգ, ինչպես նաև հրդեհաշիջման համակարգ: Շենքը կունենա հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորություն բոլոր կողմերից:

Առաջին հարկում նախատեսվում է բնակելի մասի նախասրահը, որը կունենա մուտքեր շենքի երկու կողմերից: Առաջին հարկում նախատեսված են բնակիչների սպասարկման համար տարբեր հասարակական նշանակության և վարձակալման տրվող սենքեր: 2-ից մինչև 15-րդ հարկերում նախատեսված են 154 հատ բնակարաններ: Բոլոր վերգետնյա հարկերը ապահովված կլինեն էվակուացիոն ելքերով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 0.4 ԿՎ հզորությամբ կիրականացվի կառուցվող ՏԵ-ի 10կՎ սարքվածքներից:

Գազամատակարարումը նախատեսվում է Ակունք ԳԲԿ-ն սնող D=200մմ կողմնատար գազատարից:

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի մակերես՝ 4597 քմ,
- կառուցապատման մակերես՝ 1330 քմ /29 %/,
- կանաչապատման մակերես՝ 1853 քմ /40.3 %/,
- անջրանցիկ մակերես՝ 1414 քմ /31 %/,
- բնակարանների ընդհանուր թիվը՝ 154 բնակարան,
- ստորգետնյա հարկերի մակերեսը՝ 5500 քմ,
- ավտոկայանատեղի 117 հատ:



Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 21500 խմ, որից հետվիցքը՝ 3800 խմ, իսկ ավելացած 17700 խմ հողային զանգվածը կհեռացվի համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել համաձայն բարեկարգման, կանաչապատման նախագծի: Նախատեսվում է տնկել՝ կատալպա՝ 3 հատ, կաղնի ամառային՝ 6 հատ, թխկի սրատերև՝ 12 հատ, փովոդ գիհի՝ 4 հատ, սյունածև թույա՝ 2 հատ, ասպիրակ՝ 15 հատ, բարբարիս՝ 12 հատ, կիպրոս՝ 650 հատ (270 գծմ), թզուկ վարդեր՝ 380 հատ, սիզամարգ՝ 1800 քմ: Նախատեսվում է ոռոգումն իրականացնել կաթիլային եղանակով՝ հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադբից:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր և կենցաղային աղբ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խացուցիչներով և այլն:



Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Ակունքի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



3. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ համաձայնեցված համայնքապետարանի հետ:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՎարդանյանՇին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի 275-րդ թաղամաս 17 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սվետլանա Կիզիրյան